




# Գեղարքունիքի մարզ

## Կլիմա



Գեղարքունիքի մարզն ամենամեծ մարզն է, գտնվում է Հայաստանի Հանրապետության արևելյան շրջանում: Մարզի 1/4-ը ծածկված է ջրով, մարզկենտրոնը Գավառն է:

# Մահմանակից է՝




Գեղարքունիքի մարզում կլիման բարեխառն լեռնային է: Այստեղ ձմռանը ցուրտ է, քանի որ մարզը ծովի մակերևույթից բարձր է 2000-3500մ և առկա է կայուն ձնածածկույթ: Ամռանը տաք է, միջին ջերմաստիճանը +18-ից +20°C: Ամռան ամիսներին դիտվում է ամպամածություն, սակայն եղանակը տաք է, տեղումները շատ չեն՝ 400-450մմ, բարձրադիր գոտիներում կարող է լինել 1000մմ, պայծառ օրերի քանակը կազմում է 125 օր:

Սևանա լճի հարավային և արևմտյան հատվածներին բնորոշ են լեռնատափաստանային սևահողերը, իսկ ավելի բարձրադիր հատվածներին բնորոշ են լեռնամարգագետնային հողերը:

Գեղարքունիքի մարզը այլ մարզերից տարբերվում է նրանով, որ արևային օրերը ավելի շատ են հանդիպում քան մյուս մարզերում:

Մարզկենտրոն՝ Գավառը, որը մոտավորապես Երևանից հեռու է 100կմ, ըստ կլիմայական պայմանների բաժանվում է բարեխառն երկար տևողությամբ երկու խմբերի



Մարզն ունի 5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Վարդենիս, Սևան, Մարտունի:

Գեղարքունիքի մարզում է գտնվում Սևանա լիճը, որը ծովի մակերևույթից բարձր է 1900մ: Լճի մակերեսը կազմում է 1.26 հազ. քառ. կմ:

Սևանա լիճը մեծ նշանակություն ունի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզում առանձնանում է Սևանի ավազանը, շնորհիվ իր հարուստ բնական ռեսուրսների:

Սևանի ավազանին շրջապատում են լեռնաշղթաներ, որոնք ծովի մակերևույթից բարձր են 2500-3000մ: Արևմուտքից Սևանա լիճը շրջապատված է Գեղամա լեռնաշղթայով:

Սևանի ավազանն իր մեջ ներառում է 6 միկրոշրջան՝



- ❖ Ծովազյուղ համայնքից, «Ինտուրիստ» մոթելից մինչև «Ախթամար» հյուրանոց:
- ❖ «Ախթամար» հյուրանոցից մինչև Սևանի թերակղզու սկիզբը:

- ❖ Թերակղզի:
- ❖ Թերակղզուց մինչև Լճաշեն գյուղը, որտեղ արևմտյան ափը անցնում է հարավայինին:
- ❖ Հարավային ափը մինչև նորաշեն գյուղը:
- ❖ Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերի ստորին մասը Ցամաքաբերդ գյուղից մինչև մանկական սանատորիա:

## Առաջին միկրոշրջան

Ավագոտ է, ունի թույլ թեքություն, լայնությունը հասնում է 200 մ-ից 1 կմ-ի, ծովի մակերևույթից միկրոշրջանը բարձր է 1898-1920մ:

Միկրոշրջանը գտնվում է լեռնային սարահարթի եզրին, որն էլ տեղակայված է Փամբակի և Արեգունու լեռնաշղթաների միջև: Հենց դրա պատճառով է,



որ այս <<խողովակի>> արևելյան և արևմտյան ուղղության քամիները գերակշռում են: Բարձունքները թույլ չեն տալիս, որ հարավային և հյուսիսային քամիները ներխուժեն միկրոշրջան: Լեռները սահմանափակում են հորիզոնը և ստվերապատում միկրոշրջանը, այդ պատճառով արևափայլը օրվա ընթացքում կրճատվում է 1-ից 1.5 ժամով: Թերակղզու համեմատ այս ափը ավելի ամպամած է:

Սևանի լեռնանցքից թափանցող արևմտյան ուղղության քամիները հյուսիսային Արեգունու լեռնաշղթայի կողմից օժտված են ֆյունայի բնույթով, այսինքն շրջանցելով լեռները, օդային զանգվածները տաքանալով իջնում են դեպի ծովի մակերևույթ: Տարվա ընթացքում Սեմյունովկան ավելի շատ տեղումներ է ստանում, քան այս շրջանը, իսկ թերակղզին շրջանից համեմատաբար ավելի քիչ տեղումներ է ստանում:

| Ձևեր   | Գարուն  | Ամառ  |
|--|---|---|
| <p>Եղանակաստեղծման պրոցեսի համար կարևոր դեր ունի լճի ջերմային ռեժիմը:</p> <p>Ձմռանը գերակշռում են սառնամանիքային օրերը, երբ ջերմաստիճանը հասնում է -2.5-ից 12.5°:</p> <p>Չնայած նրան, որ սառնամանիքային եղանակները աննշան կրկնվում են, այս միկրոշրջանի ձմեռային եղանակները առանձնանում են իրենց մեղմ ռեժիմով: Դա բացատրվում է շրջապատում գտնվող լեռնազանգվածների և լճի ջրավազանի առկայությամբ: Սակայն որոշ հզոր օդային քամիները կարողանում են հաղթահարել լեռնային արգելքը և թափանցել այս շրջան, որի պատճառով դիտվում են «զգալի սառնամանիքներով»:</p> <p>Եղանակներ:</p> | <p>Ակտիվանում է ցիկլոնային շրջանը, ձնածածկույթը խախտվում է և այն վերջնականապես վերանում է ապրիլ ամսին: Գարնան եղանակային պայմանները անկայուն են: Առավելապես մեծ տեղումներ են դիտվում մայիս-հունիս ամիսներին և այդ տեղումները ուղեկցվում են ամպրոպով, որի ժամանակ մթնոլորտում թեթև իոնների քանակը աճում է:</p> | <p>Արևոտ է, արևափայլի տևողությունը հուլիս ամսին կազմում է ` 311, իսկ օգոստոսին ` 282 օր: Եղանակը չափավոր տաք է երբեմն կարող է լինել նաև շոգ, նվազում է տեղումների և ամպամածության տոկոսը: Հարաբերական խոնավությունը առավոտյան և երեկոյան 70-75% է, իսկ ցերեկը ` 50-60%:</p> |

Առաջին միկրոշրջանը բնորոշվում է ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվությամբ և արևափայլի բարձր քանակությամբ:

Տարվա ընթացքում գերակշռում են հարավային, հարավ-արևմտյան և արևմտյան ուղղություններով քամիները: Ձնածածկույթ առաջանում է ամեն տարի, սակայն այս շրջանում հյուսիս արևմտյան քամիները խոչընդոտում են խորը ձնածածկույթի առաջացմանը:

## Երկրորդ միկրոշրջան

Այս միկրոշրջանը ձգվում է Փամբակի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ստորոտի երկարությամբ: Ծովի մակերևույթից բարձր է 1898-1950մ: Այս միկրոշրջանը յուրահատուկ է և առանձնանում է Սևանի ավազանի այլ միկրոշրջաններից: Այն գտնվում է մեղմ արևոտ հյուսիս-արևելյան զառիթափ լեռնալանջերի ազդեցության տակ: Լանջը ծածկված է թփերով և խոտային ծածկույթով: Որոշ տեղեր նկատվում են ենթահողային ջրի ելքեր, որոնք լինում են աղբյուրների և ժայռերի տեսքով: Այս հատվածում լեռնաշղթայի ջրբաժան գիծը հասնում է 2050մ-ի, իսկ արևելքում կարող է լինել՝ 2300մ բարձրության:



Թերակղզում գարունը 5-6 օրով շուտ է գալիս, քան այս ափին: Ամռանը կոմֆորտային ջերմաստիճանը այստեղ պահպանվում է շատ ավելի քիչ, քան Սևանի ավազանում որևէ այլ տեղ: Ձմռան տևողությունը 150 օր է: Երկրորդ իկրոշրջանում հնարավոր չէ իրականացնել արևա- և օդաբուժություններ, քանի որ այն չունի բավականին ռեսուրսներ: Սակայն այս միկրոշրջանը համեմատաբար ունի էսթետիկ տեսակետից լավագույն ցուցանիշներ, քան մնացած 5 միկրոշրջանները: Միկրոշրջանում համեմատաբար քիչ է կատարվում արևի էներգիաի ներհոսք և կրճատվում է արևափայլի տևողությունը, ինչի պատճառ են հանդիսանում բարձր լեռները: Արևափայլի ցածր տևողությունն դիտվում է՝ ձմռանը, իսկ առավելագույն տևողություն ամռան ամիսներին:

Օրվա առաջին կեսին արևափայլի տևողությունը մեծ է այն ժամանակ, երբ շրջանը բաց է լճի կողմից, իսկ օրվա երկրորդ կեսին Փամբակի լեռները փակում են հորիզոնը, որի պատճառով կրճատվում է արևափայլի տևողությունը:

## Երրորդ միկրոշրջան



Կլիմայական պայմանները Սևանի ավազանի հյուսիս և հարավ-արևմտյան մասերի բոլոր միկրոշրջաններից ամենաբարենպաստն է թերակղզին: Սա պայմանավորված է թերակղզու շուրջը ջրի առկայությամբ և Փամբակի լեռնաշղթայի արևելյան

լեռնաճյուղերին: Ի տարբերություն ցամաքի լճի մակերեսի վրա օրական և տարեկան ամպլիտուդան ավելի փոքր է, քանի որ ջրային ավազանը շուտ է տաքանում և սառչում:

Նշեցինք, որ այստեղ ձմռանը լինում է չափավոր ցուրտ եղանակ, օդի խոնավությունը այդ ժամանակ հասնում է 76%-ի: Ձմռանը քամիները ունեն հյուսիսային ուղղություն, իսկ ամռանը առավելապես հարավ-արևմտյան: Քամու արագությունը լինում է 5.4-5.5մ/վ: Ձմռան ամիսներին ջերմաստիճանը հասնում է -2.5-ից -12.5°C: Չնածածկույթը սկսում է ձևավորվել նոյեմբերին, իսկ արդեն դեկտեմբերի կեսերին առաջանում է կայուն ձնածածկույթ:

Ամռանը եղանակը բարենպաստ է, լավ պայմաններ են ստեղծված արևաբուծության համար:

### Չորրորդ միկրոշրջան

Այս միկրոշրջանը ձգվում է Սևանի թերակղզու պարանոցից մինչև լճաշեն գյուղը, այստեղից էլ լճի ափը շրջվում է դեպի արևելք: Ափային գծի երկարությունը 10կմ է: Չորրորդ միկրոշրջանը ամենամեծն է: 30-40 տարի է ինչ լճափը ազատված է ջրից և զգալի մասը պատված է անտառներով: Քանի որ ռելիեֆը բլրակային է, Կարող են հանդիպել ճահճոտ ափսեանման տարածքներ:



Կլիմայական պայմանների տեսակետից այս միկրոշրջանը դասվում է ցամաքային և լճային միկրոշրջանների մեջ: Լճի ազդեցությունը նկատվում է արևելյան քամիների ընթացքում, իսկ ցամաքի ազդեցությունը՝ արևմտյան քամիների դեպքում: Կլիմայի ձևավորման հարցում մասնակցություն ունեն Գեղամա և Փամբակի լեռները, որոնց արանքում գտնվում է 4-5կմ հարթավայր:

## Հինգերորդ միկրոշրջան

Գտնվում է Լճաշեն և Նորաշեն գյուղերի մեջտեղում: Ջրափնյա գծի երկարությունը



հասնում է՝ 7-8կմ-ի: Շատ ծովախորշերի, ծովափոսերի և կղզյակների պատճառով այս ավեր ծուռումուռ է:

Խոնավաբեր օդերը շրջանցելով Գեղամա լեռները իրենց խոնավության մի մասը թողնում են լանջի հարավ-արևմտյան մասում և Սևանի ավազան են թափանցում արդեն

ջրագրկված տաք քամիները: Տարվա տաք կեսին եղանակը՝ խորշակային է, իսկ ձմռանը նկատվում է անամպ սառնամանիքային եղանակ: Այստեղ ավելի շատ հանդիպում են հյուսիսային և հյուսիսարևելյան ոչ մեծ արագությամբ քամիները, իսկ զարնանը ավելի ուժեղ քամիներ:

Չորրորդ և հինգերորդ միկրոշրջանները իրարից շատ չեն տարբերվում: այս միկրոշրջանները մյուսներից տարբերվում են լանդշաֆտակլիմայական, լեռնագրական պայմաններով:

## Վեցերորդ միկրոշրջան

Այստեղ առկա են հարավային էքսպոզիցիա ունեցող լեռնալանջեր, որոնց կլիմայաբուժության առավելությունները ապացույցների կարիք չունեն:

Բարենպաստ են Արեգունու հարավային մասում գտնվող Փամբակ, Ջիլ, Դարա և այլ գետերի հովիտները: Այստեղ ձմեռը այնքան թույլ է, որ ծաղկում են սալորենին, ընկուզենին, ծիրանենին, խնձորենին և տանձենին:

Քանի որ Սևանը ցածրադիր է, սառնամանիքները այնտեղ 2-3<sup>0</sup>-ով ավելի ուժեղ են քան որոշ հովիտներում: Տարվա տաք եղանակներին Լանջերի հողը 3-4<sup>0</sup>-ով ավելի է տաքանում:



Մյուս շրջանների ինտենսիվ տաքացման հետևանքով, օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները բարձր են: Հարաբերական խոնավությունը առավոտյան հասնում է 68%-ի, իսկ ցերեկը 55%-ի:

Ձմեռը չափավոր ցուրտ է, եղանակը կայուն: Ձնածածկույթը ձևավորվում է նոյեմբերի երրորդ տասնօրյակին, իսկ կայուն ձնածածկույթը դեկտեմբերին: Հունվար-փետրվար ամիսներին ձնածածկույթի բարձրությունը կազմում է 25-35սմ, իսկ ավամերձ շրջաններում 10-20սմ:

Վեցերորդ միկրոշրջանում կայուն ձնածածկույթը փոքր է, հողի սառության խորությունը մեծ:

Այս միկրոշրջանը յուրահատուկ է օդի չորությամբ, այստեղ կրկնվում են անհողմ և արևոտ եղանակները: Տարվա այս եղանակին մթնոլորտում թթվածնի քանակը առավելագույնն է:

# Գյուղատնտեսություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության զբաղվածության ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը:

Գեղարքունիքի մարզի 59.3%-ը զբաղեցնում են գյուղատնտեսական հողատեսքերը:

Մկսած 2007թ-ից մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը տարեց տարի աճում է՝

2007թ → 90.0 մլրդ դրամ

2009թ → 11.6 մլրդ դրամ

2010թ → 125.7 մլրդ դրամ

բուսաբուծության արտադրանք

85 մլրդ դրամ

Անասնապահություն

40.2 մլրդ դրամ

Եթե 2007թ-ին գեղարքունիքի մարզի արտադրում էր համախառն արտադրանքի 14%-ը, ապա 2010թ-ին այն դարձել էր 19.7%: 2010թ-ի տվյալներով բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է մարզի համախառն արտադրանքի կառուցվածքի 68%-ը, որի հետևանքով նկատվել է բուսաբուծական մթերքների գների կտրուկ աճ:

Գեղարքունիքի մարզում մեծ մասամբ մշակում են հացահատկային մշակաբույսեր, կարտոֆիլ և այլ բանջարեղեններ: Վերջին տարիներին այստեղ սկսել են զբաղվել նաև հատիկաընդերային բույսերի մշակմամբ (ոսպ, ոլոռ, սիսեռ), որոնց տնտեսական արդյունավետությունը 3-4 անգամ մեծ է, քան հացահատկային մշակաբույսերինը:

## Կարտոֆիլ



Գեղարքունիքի մարզի կարտոֆիլի ցանքերի առավելագույն մասը գտնվում է Վարդենիկի տարածքում, առավելապես՝ Մասրիկում, որտեղ հոկտեմբերից սկսվում է բերքահավաքը, այդ գործընթացին ներգրաված են լինում մանր ու մեծ տնտեսությունների ներկայացուցիչներ, վարձավճարով աշխատավորներ նաև օգտագործվում են քանդող մեքենաներ: 2017թ-ի հոկտեմբեր ամսի տվյալներով բերքը մարզում հավաքվել էր 60%-ի չափով: Օրավարձով աշխատողները Գեղարունիքի մարզի տարբեր համայնքներից անգամ հրազդանից գալիս են Վարդենիկ:

Օրական վաստակ՝


Կարտոֆիլ հավաքող բանվոր

5000 դր.



2017թ-ի հոկտեմբերի վերջի եղանակը բարենպաստ ազդեցություն թողեց անկորուստ բերք հավաքելու համար:

**Վաճառքի գներ՝**



Չնայած նրան որ 2016թ-ի բերքատվությունը ավելի մեծ է քան 2017թ-ինը, սակայն տնտեսությունների համար շահավետ է, քանի որ ապահովված է իրենց սպասված եկամուտը և շահավետ գինը փակում է կորուստները:

2016թ-ին ցանվել է 15 434 հեկտար կարտոֆիլ, որից սեպտեմբերի վերջին տասնօրյակին բերքահավաքն ավարտվել է 9000 հեկտար տարածքում, իսկ հավաքված բերքը կազմել է 240 000տ:



## Այլ մշակաբույսեր




Մարգում տարածված է նաև բազմամյա խոտաբույսերի մշակումը: Ցանովի խոտաբույսերի բարձր բերքատվությունը հնարավորություն է տալիս ստանալու ավելի մեծ քանակությամբ անասնախոտ: Բարձր բերքատվություն է ապահովում նաև այն, որ վարելահողերում մշակաբույսերի փոփոխությունը չի որակազրկում հողը:

Գարնանացանը գարու հետ կատարվում է առվույտի և կորնգանի ցանք: Առաջին տարվա ստացած եկամտով փակում են կատարած ծախսերը, իսկ երկրորդ տարվանից՝ խոտադաշտերը կատարված ծախսերի ցուցանիշներով գրեթե հավասարվում են բնական խոտհարքի վրա կատարված ծախսերին՝ միննույն ժամանակ ապահովելով 3-4 անգամ բարձր բերքատվություն:

Համայնքներում աճեցնում են հատապտուղներ՝ ազնվամորի, բանջարեղեններ և դեկորացիոն այլ ծաղիկներ: Եթե բանջարեղենների աճեցումը նպաստում է տնտեսությանը ապահովելու համար և շուկայում մրցունակ չէ, քանի որ այլ համայնքներից բերված բերքը գնային առում ավելի մրցունակ է, ապա ազնվամորու աճեցումը կարող է շահեկան լինել:

Ազնվամորու աճեցման համար կարևոր են՝ արևային օրերը և ոռոգման հնարավորությունը:

Շուկայում ազնվամորին բավականին պահանջարկ ունի, որը գնալով աճում է: Այն պահանջված է ոչ միայն գյուղում և շուկաներում, այն վերամշակվող գործարանների կողմից:



### Հողագործության ոլորտում նախաձեռնություններ

- ✚ Աջակցություն անջրդի հողերում բարձր բերքատվությամբ բույսերի սերմերի ներկրման հարցում:
- ✚ Աջակցություն գյուղտեխնիկայի թարմացման հարցում:
- ✚ Հացահատկի որակյալ սերմերի ներկրման աջակցություն:

- ✚ Աջակցություն ազնվամորու և այլ մշակաբույսերի ներկրման, փորձնական աճեցման համար:
- ✚ Գանձակ գյուղում 1կմ երկարությամբ ջրահեռացման համակարգի մաքրում, որի շնորհիվ 60 հեկտար հողատարածք ճահճացումից կազատվի:

# Մյունիքի մարզ



# Կլիմա



Մյունիքի մարզում կլիմայական պայմանները չափազանց

բազմազան են: Մարզում ձևավորվել են մի քանի կլիմայական գոտիներ՝

1. Չոր մերձարևադարձային
2. Չափավոր տաք
3. Բարեխառն
4. Ցուրտ

## **Չոր մերձարևադարձային գոտի**

Այս գոտում տեղումներ քիչ են նկատվում: Օդի տարեկան ջերմաստիճանը  $14^{\circ}\text{C}$  է,  $26^{\circ}\text{C}$  կազմում է ամենատաք ամսվա ջերմաստիճանը, իսկ հունվար ամսին ջերմաստիճանը հասնում է  $1-2^{\circ}\text{C}$ -ի: Հայաստանում ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է  $43.7^{\circ}\text{C}$  (Մեղրի), իսկ ամենանվազագույնը՝  $-18^{\circ}\text{C}$  (Մեղրի): Ոչ սառնամանիքային շրջանը տևում է 220-252օր: Մթնոլորտային տեղումները հիմնականում դիտվում են գարնան ամիսներին տեղատարապ անձրևների տեսքով, դրանք կարող են հանդիսանալ էրոզիայի պատճառ: Այստեղ ձմեռները շատ մեղմ են, առանց կայուն ձնածածկույթի,



ձմեռների կրկնելիությունը կազմում է 90-95%: Այս գոտում աղբյուրները և գետաջրերը բացակայում են: Քամու միջին արագությունը՝ 1մ/վ է, սակայն առավելագույնը 21մ/վ:

### **Չափավոր տաք կլիման մեղմ ձմեռներով**

Ձևավորվել է այն տարածքներում որոնք ունեն 1000մ բարձրություն:

Կապանում օդի միջին տարեկան ջերմաստիճանը հասնում է՝ 12°C-ի: Ամռանը միջին ջերմաստիճանը մոտավորապես 24°C է: Բացարձակ բարձր ջերմաստիճանը գրանցվել է՝ 42.4°C (Կապան), իսկ ամենացածր ջերմաստիճանը եղել է՝ -22.1°C (Կապան): Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 500-600մմ: Մեծաքանակ տեղումներ դիտվում են ամռանը՝ 60-130մմ: Նաև դիտվում են այնպիսի տեղատարապ անձրևներ, որ օրական առավելագույն քանակը գերազանցում է ամսականին:

### **Բարեխառն կլիմա մեղմ ձմեռով**

Ձևավորվել է այն տարածքներում, որոնք ունեն 1300մ բարձրություն: Համեմատաբար այս կլիման ավելի խոնավ է քան մյուս կլիմաները: Հունվարին ջերմաստիճանը կազմում է -0-ից-1°C, իսկ ամենացածր ջերմաստիճանն է՝ -18-ից-20°C: Միջին ջերմաստիճանը հուլիս ամսին 19°C է, իսկ ամենաբարձր ջերմությունը 35.4°C: Տեղումների քանակը 800մմ է: Հաստատում ձնածածկ առաջանում է, սակայն ոչ ամեն տարի:

### **Բարեխառն համեմատաբար խոնավ կլիմա**

Միակ կլիմայի տեսակն է որը ունի չափավոր խոնավություն: Միջին Տարեկան ջերմությունը գրանցվել է 7°C (Միսիան), հունվարին ամենացածր ջերմաստիճանը՝ -34.4°C, միջին ջերմաստիճանը կազմում է -4-ից -5°C, իսկ ամենաբարձր ջերմաստիճանը 36.2°C -ը չի անցել:

Մթնոլորտային տեղումները տարվա մեջ կազմում են 600մմ: Կայուն ձնածածկ առաջանում է ոչ ամեն տարի:

### **Բարեխառն կլիման մեղմ ամառներով և ցուտ ձմեռներով**

Մեծ մասամբ բնորոշ են ցուրտ եղանակները: Միջին ջերմաստիճանը -3°C է, նվազագույն ջերմաստիճանը Քաջարանի տվյալներով՝ -22°C, իսկ առավելագույնը 34°C է: Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 750մմ:

### **Չափավոր ցուրտ կլիմա**

Կլիմայի այս տեսակը բնորոշվում է զով ամառներով և ցուրտ ձմեռներով: Հունվար ամսվա միջին ջերմաստիճանը -8°C է (Միսիանի Լեռնանցք), ամենացածր ջերմաստիճանը եղել է -26°C (Միսիանի Լեռնանցք), հուլիս օգոստոսին այդ նույն

տարածաշրջանում միջին ջերմաստիճանը հասնում է 13°C-ի, իսկ ամենաբարձր ջերմաստիճանը՝ 31°C: Մթնոլորտային տեղումների քանակը կարող է գերազանցել 750-800մմ-ը: Չնածածկույթ առաջանում է ամեն տարի:

Տարեկան մթնոլորտային տեղումները հավասար չեն բաշխված: Տեղումներն աճում են ըստ բարձրության, այն առավելապես արտահայտված է Մեղրիի ավազանում: Ամեն 100մ բարձրանալիս Մեղրիի ավազանում տեղումների քանակը ավելանում է 33-40մմ-ով, իսկ Ողջիի ավազանում այն ավելանում է՝ 28-35մմ-ով:

Ռելիեֆից է կախված քամիների արագությունը, ռեժիմը և ուղղությունը, պարզ օրերի քամիները լեռնահովտային են:

### Քամու ամսական միջին արագությունը (մ/վրկ)

| Օրերնութաբանական կայան | Հունվար | Ապրիլ | Հուլիս | Հոկտեմբեր | Տարեկան միջինը | 15մ/վրկ և ավելի օրերի քանակը |
|------------------------|---------|-------|--------|-----------|----------------|------------------------------|
| Մեղրի                  | 1.6     | 1.5   | 1.9    | 1.4       | 1.6            | 1                            |
| Կապան                  | 0.9     | 1.4   | 1.0    | 1.0       | 1.0            | 3                            |
| Գորիս                  | 2.9     | 1.5   | 1.2    | 1.2       | 1.7            | 15                           |
| Միսիան                 | 2.5     | 2.5   | 3.6    | 2.2       | 2.7            | 4                            |
| Միսիանի լեռնացք        | 8.5     | 7.3   | 8.6    | 6.1       | 7.7            | 85                           |
| Գորայք                 | 1.4     | 1.4   | 2.0    | 1.4       | 1.6            | 4                            |

# Գյուղատնտեսություն



Մյունիքի մարզում դարեր շարունակ բնակչության հիմնական զբաղմունքը եղել է հողագործությունը և անասնապահությունը:

Գետահովիտներում ջրովի մանր հողակտորների վրա բնակչությունը տնկել է խաղողի և պտղատու այգիներ, ցանել բանջարանոցային և բոստանային մշակաբույսեր՝ լոբի, դդում, վարունգ, սոխ, կաղամբ, ձմերուկ, սեխ: Բնակչության եկամտի հիմնական աղբյուրը հնուց ի վեր եղել է անասնապահությունը: Մշակել է արծեքավոր կերաբույսեր՝ առվույտ, կորնգան: Մարդիկ զբաղվել են խոշոր եղջերավոր անասնապահությամբ և ոչխարաբուծությամբ, որոշ չափով նաև խոզաբուծությամբ, ձիաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ և շերամաբուծությամբ:

Մարզի յուրահատուկ բնական պայմանները, ռելիեֆի բարդությունը և մասնատվածությունը սահմանափակել են մշակելի հողատարածությունները, դժվարացնում են գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործումը, ինտենսիվ գյուղատնտեսության վարումը:

Մյունիքի մարզին բաժին է ընկնում ՀՀ հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների 10.9%-ը: Նրա բաժինը ՀՀ-ում հատկապես մեծ է հացահատկային (12.5%) և կերային մշակաբույսերի (11.7%) ցանքատարածություններում: Իսկ մնացած մշակաբույսերի ցանքատարածությունները փոքր են. Կարտոֆիլի ցանքատարածությունները կազմում են 5.0, բանջարանոցային մշակաբույսերին՝ 3.9, տեխնիկական մշակաբույսերին՝ 0.3, բոստանայինը՝ 0.2%:

Հողագործության համար ավելի նպաստավոր պայմաններ կան մարզի հյուսիսային մասում՝ Եռաբլրի և Տեղի սարավանդերում: Մարզի հարավային մասին՝ Կապանի և Մեղրու տարածաշրջաններին բնորոշ են փոքր հողակտորները (մինչև 1 հա), որոնք տարածված են գետահովիտներում և թեք լանջերին: Այս հողակտորներում թեև գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործումը հաճախ լինում է ոչ նպատակահարմար, սակայն կարտոֆիլի, բանջարաբոստանային և արժեքավոր այլ մշակաբույսերի մշակակությունն ու այգեգործությունը տնտեսապես արդարացված և շահավետ են:

Մյունիքի գյուղատնտեսության հնագույն և առաջատար ճյուղերից է այգեգործությունը:

Խաղողի այգիների զգալի մասը (70%-ը) գտնվում է Մեղրու տարածաշրջանում, որտեղ արտադրվում է մարզի խաղողի ավելի քան 90%-ը: Տարածված տեսակը արենին է, որը հանդիսանում տեղական այգիները գլխավորապես տեղաբաշխված են 5-10<sup>0</sup> թեքություն ունեցող լեռնալանջերին՝ այսինքն այն վայրերում, որոնք ստանում են առատ ջերմություն և քամիներից պաշտպանված են բնական արգելքներով:



հիմք է գինեգործության համար: Խաղողի

Մեղրու տարածաշրջանի ցածրադիր գոտիներում մինչև 1000մ բարձրություններում մշակում են մերձարևադարձային մշակաբույսեր՝ նուռ, թուզ, նուշ, սերկևիլ: Այստեղ աճեցնում են նաև լավ համ ու հոտ ունեցող տարբեր տեսակի պտուղներ՝ դեղձ, ծիրան, ընկույզ և այլն: Պտղաբուծությամբ (նուռ, թուզ և այլն) զբաղվում են Մեղրու տարածաշրջանի բոլոր ցածրադիր գյուղերը, իսկ խնձորի այգիները տարածված են բարձրադիր գոտում գտնվող Լիճք և Տաշտուն համայնքներում:

Պտղաբուծությամբ զբաղվում են նաև Ողջի, Որոտան գետերի և դրանց վտակների հովիտներում: Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում զգալի են խնձորի, տանձի, կեռասի, սալորի և պտղատու այլ ծառերի այգիները: Ջերմության բավարար քանակությունը, ոռոգման ջրի առկայությունը բավարար պայմաններ են ստեղծում Կապանի տարածաշրջանում պտղաբուծության զարգացման համար:

Խոշոր և մանր անասնապահությունը առավել զարգացում էր ապրել Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում, որտեղ խոտհարքերը, արոտավայրերը, կերային մշակաբույսերը կերային կայուն բազա էին ստեղծել նշված ճյուղերի զարգացման համար: Խոզաբուծությունը և թռչնաբուծությունը առավել զարգացում են ունեցել Կապանի տարածաշրջանում, հատկապես Կապանին մերձակա տարածքներում՝ մարզի ամենախոշոր բնակավայրին թարմ մսով ապահովելու համար:



Մյունիքի մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2013թ-ին կազմել է՝ 62.3 մլրդ դրամ, որը ապահովել է ՀՀ ծավալի 6.8%-ը: Մարզում հողատեսքերը կազմում են ամբողջ տարածքի 74.5%-ը: 2012թ-ին մարզում կաին 18 390 ֆերմերային և գյուղատնտեսական տնտեսություններ, 60 կազմակերպություններ որոնք զբաղվում էին գյուղմթերքների վերամշակմամբ:

Մյունիքի Մարզում զբաղվում են նաև բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ) և անասնապահության (միս, կաթ) արտադրությամբ: Մարզի տարածքը ունի տարբեր գոտիներ և դա բարենպաստ է էկոլոգիապես մաքուր մեղրի ստացման համար: 2013թ-ի տարեսկզբին այս մարզում պահվում էր 42 019 մեղվաընտանիք:

Պտղաբուծություն.

2012թ-ի տվյալներով 2 586 հա տարածքից ստացվել է 129 509 ցենտներ բերք: 184 հա խաղողի այգիներից հավաքվել է 1 149տ խաղող:

Անասնապահություն.

Հարկավոր է ստեղծել տոհմային տնտեսություններ, մեծացնել կենդանիների արհեստական սերմնավորման ծավալները, որպեսզի նախիրների հոտերը լրացվեն որակյալ կազմով: Այն նաև նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը:

Բռնակոթ համայնքի կաթի արտադրամասում օրական վերամշակվում էր 1տ կաթ (2014թ): Այստեղ արտադրվում էր Լոռի, Չանախ պանիրներ և կարագ:

Մյունիքի մարզում հնարավոր դարձավ չմշակվող հողերի քանակը պակասեցնել, 2014թ-ին մշակվող հողերը կազմում էին 73%:

2017թ-ին կարկուտի հետևանքով տուժեց բերքատվությունը: Մյունիքի մարզի՝ Գորիս, Միսիան և մի քանի այլ համայնքներում կարկտահարության վնասները կազմում էին 60%,



առանձին հողակտորները տուժել էին 80-100%-ով: Կահն հատվածներ, որտեղ կարկտահարության վնասը շատ բարձր էր. Օրինակ՝ Կոռնիձոր, Տեղ համայնքների որոշ դաշտերում կարկտահարության վնասը հասնում էր՝ 80, 90%-ի: Այն մշակաբույսերը, որոնք վնասվել էին 100%-ով և

հնարավոր չէր վերականգնել, այդ բույսերը անցկացվում էին հողի տակ և օգտագործում, որպես կանաչ պարարտանյութ:

Վնասվել էր Տեղ, Արավուս ինչպես նաև Քարաշեն գյուղերի ցորենի ու Կորնգանի զարնանացանի և աշնանացանի ցանքատարածությունները:

# Արարատի մարզ



# Կլիմա



Արարատի մարզում կլիման ենթակա է վերընթաց գոտիականության, որը պայմանավորված է հայկական լեռնաշխարհի լեռնային մակերևույթով: Արարատի մարզում առկա է Հյաստանում տարածում ունեցող 8 կլիմաներից 6-ը, որոնք ունեն հետևյալ հաջորդականությունը սկսած հարթավայրային շրջաններից մինչև լեռնային շրջանները.

- + չոր խիստ ցամաքային
- + չոր ցամաքային
- + չափավոր ցամաքային
- + բարեխառն
- + ցուրտ լեռնային
- + ձյունամերձ

Մարզում ցածրադիր և բարձրադիր շրջանների միջև ջերմաստիճանը տատանվում է  $+10^{\circ}\text{C}$ -ի և  $-2^{\circ}\text{C}$ -ի միջև: Հունվարի միջին ջերմաստիճանը այդ շրջանում  $-6^{\circ}\text{C}$  և  $-12^{\circ}\text{C}$  է, հուլիսյան ջերմաստիճանը  $+26^{\circ}\text{C}$  և  $+8^{\circ}\text{C}$ , միջին տարեկան տեղումները 200մմ և 1000մմ է:

Արարատի մարզի ցածրադիր շրջաններում առավելագույն ջերմաստիճանը եղել է  $+42^{\circ}\text{C}$ , իսկ նվազագույնը՝  $-33^{\circ}\text{C}$ :




Միջին գոտում մինչև 2000մ բարձրության վրա Արարատյան գոգավորության համեմատ, ձմռանը ավելի արևոտ է լինում և տաք: Պատճառը ձմռան անհողմ եղանակի հետևանքով եղած ջերմաստիճանի շրջադասությունն է, երբ սառը և ծանր օդը կուտակվում է Արարատյան դաշտում: Գարնան տևողությունը կարճ է, մայիսի երկրորդ տասնօրյակից ջերմաստիճանը 15<sup>0</sup>-ից անցնում է և սկսվում չոր երկարատև ամառը, այն տևում է մինչև սեպտեմբերի երկրորդ կեսը: Աշունը մեղմ է, հաճախ դիտվում են թույլ անձրևներ: Արարատյան մարզի հարթավայրային շրջաններին բնորոշ են լեռնահովտային քամիները: Ամռանը՝ կեսօրից հետո քամին փչում է Գեղամա լեռներից հովիտներ:

## Գյուղատնտեսություն



Արարատի մարզի տնտեսության հիքը կազմում է գյուղատնտեսությունը, այստեղ առավելապես զբաղվում են՝ պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, խաղողաբուծությամբ: Բուսաբուծության զարգացման համար բարենպաստ են հարթավայրային և նախալեռնային գոտիները, իսկ անասնապահության զարգացման համար՝ լեռնային գոտիները: Արարատի մարզի 71.5%-ը բնակվում են գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական

գործունեությամբ: Արարատի մարզում արդյունաբերության համար, որպես հումքի մատակարար հանդիսանում է գյուղատնտեսությունը և սերտորեն կապված է նրա հետ:



ՀՀ-ում Արարատի մարզի գյուղատնտեսական հողերի միջին բերքատվությունը ամենաբարձրն է, այն կազմում է տարեկան մեկ հեկտարից շուրջ 48.7 տոննա, հանրապետության միջին 31.8 տոննայի նկատմամբ:

Մարզում գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող 31 կազմակերպություններից 6-ը իրականացնում է կաթի, 2-ը՝ մսի, իսկ մնացած 23-ը՝ բուսաբուծական մթերքների վերամշակում: 2011թ-ի համեմատ 2015թ-ին այդ կազմակերպությունների կողմից գնված գյուղմթերքի ծավալները ավելացան 24.4%-ով, իսկ հանրապետությունում՝ 44.6%-ով:

### Գյուղատնտեսության մասնաբաժինը (%)

2011-2015թթ

|        | 2011թ | 2012թ | 2013թ | 2014թ | 2015թ |
|--------|-------|-------|-------|-------|-------|
| Արարատ | 14.7  | 14.9  | 14.8  | 14.2  | 14.1  |
| ՀՀ     | 100   | 100   | 100   | 100   | 100   |

2011թ-ի համեմատ 2015թ-ին գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալները նվազել են Արարատի մարզում 3.3%-ով, Արմավիրի մարզում աճել՝ 32.5%-ով, իսկ հանրապետությունում 21.4%-ով:

2016թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին իրացվել է 13.6 հազար տոննա միս, արտադրվել է 63.6 մլն հատ ձու, 46.6 հազար տոննա կաթ:

Արարատի մարզում գյուղատնտեսությամբ զբաղվողների թիվը 2015թ-ին նվազել է 3%-ով, իսկ հանրապետությունում 3.6%-ով:

Մարզում գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Հայաստանի խոշոր եղջերավոր անասունների 6.8%-ը, ոչխարների և այծերի՝ 12.7%-ը, խոզերի՝ 12%-ը կենտրոնացված է Արարատի մարզում:

Արարատի մարզից հիմնականում արտահանվում է գյուղատնտեսական վերամշակումից ստացված արտադրանքը՝ միրգ, բանջարեղեն, գինի, կոնյակ, չրեր, պահածոներ և այլն:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):